

ՊԵՆԱՍՏՈՐԻ ԱՐԱՔ ՊԱՏՄԱԳԻՐԸ

ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շար. բազմ. 1953, թ. 8-10, էջ 193)

Ի. — Կարինի պատմությունը.

Ինծի պատմեց Մոհամմէտ իպն Պըշը եւ իպն Ուարդ ալ-Քալիան լսելով Կարինի ծերերէն թէ Կարին չարունակեց մնալ Արարներուն ձեռքը մինչեւ որ 133ին (750) Յոյներուն կայսրը եկաւ պաշարեց Մալաթիան, կործանեց անոր պարիսպը ու Իսլամ բնակիչները քշեց մինչեւ Միջագետք: Յետոյ իջաւ Մարտուլ-Հիսա (Խիճերու մարզապետին), զրկեց Գուսան (Գուշան) հայազգիին Կարինը պաշարելու: Պաշարեց զայն քանի մը օր, բնակիչները քիչ էին ու դորձակայն էր Ապու Քարիմա: Այն ատեն Կարինի բնակիչներէն հայ եղբայրներ ծակեցին անոր պարիսպին աւրուած մասը, դացին Գուսանին քով, զինքը մրտցուցին քաղաքին մէջ ու տիրեց անոր: Գուսան սպաննեց, կողոպտեց, կործանեց ու Յոյներու կայսրը տարաւ ինչ որ կըրցաւ յափշտակել, եւ աւարը բաժնեց իր ընկերներուն մէջ:

Ալ-Ուազըտի կը պատմէ թէ 139ին (756) Ալ-Մանսուր փրկեց անոնք որ ողջ էին Կարինի գերիներէն: Շինեց ու նորոգեց Կարինը. հոն դարձուց ազատած գերիները, ու հոն տարաւ զինուորներ Միջագետքէն եւ ուրիշ տեղերէն: Յետոյ Յուսայ կայսրը Կարին եկաւ Ալ-Մուդասիմ Պիլլահի (833-842) խալիֆայութեան ժամանակ: Հարուածեց քաղաքին պարիսպները, այնպէս որ քիչ մնաց որ կործանէին: Ալ-Մուդասիմ ծախսեց վրան հինգ հարիւր հազար դահեկան մինչեւ որ ամբողջով զայն (էջ 199):

ԻԱ. — Հայաստանի միւս քաղաքներուն նուաճումը.

Կը պատմուի թէ Հապիպ Կարին քաղաքը դրաւելէ վերջ՝ քաղեց Մարաշլայի վրայ: Նոյն ժամանակ իրեն եկաւ Խլաթի պատրիկը Իյատ իպըն Ղանմի նամակով, որուն Իյատ ապահովութեան թուղթ տրւած էր՝ անոր անձին, ինչքերուն ու երկիրին նկատմամբ, ու վրան գլխահարկ դրած էր. Հապիպ զայն հաստատեց: Յետոյ իջաւ տեղ մը Հարքի ու Վարազ դաշտին մէջտեղ՝ ուր եկաւ իրեն Խլաթի իշխանը եւ բերաւ գլխահարկը: Ուղեց նուէր տալ անոր, բայց Հապիպ չընդունեցաւ: Յետոյ իջաւ Խլաթ ու անկէ գնաց Սասուն: Հոն անոր հանդիպեցաւ իշխանը Մովկաց, որ Վասպուրականի կը պատկանէին: Խաղաղութիւն կնքեց անոր հետ, որոչ գումար մը վճարելու պայմանով: Անոր հետ մարդ զրկեց որ կնքեց խաղաղութեան եւ ապահովութեան դաշնագիրը:

Հապիպ յետոյ զինուորներ զրկեց Արճէշի ու Պաճուռայի գիւղերուն վրայ, ու անոնց տիրեցին: Գլխահարկ առաւ բնակիչներէն. անոր ներկայացան երեւելիները, անոնց պայման դրաւ որ վճարեն երկրին տուրքը: Իսկ Տարեխի լիճը (Վան) ազատ թողուց ու այնպէս մնաց մինչեւ Մոհամմէտ իպըն Մուսան իպըն ալ-Համթամ կառավարիչ եղաւ Միջագետքի ու Հայաստանի: Արդիւրեց ձկնորսութիւնը, ու այդ իրաւունքը ծախսեց, որով սկսաւ զայն շահագործել: Անոր յաջորդեց իր որդին՝ Մուսան իպըն Մոհամմէտ, որուն

ձեռքէն առնուեցաւ իրաւունքը:

Յետոյ Հապիպ քաղեց Արտաշատի վրայ, որ է Որդան Կարմիրի գիւղը, անցաւ Քիւրտերու գետը եւ իջաւ Դուինի մարզապետինը: Չիւսուրները քաղաքը զրկեց, յետոյ խուժեց վրան, մինչեւ հասաւ անոր դուռը: Բնակիչները ամրացան ու նետաձգութեամբ կռուեցան: Հապիպ լարեց քաղաքին վրայ մեքենաներ ու նետաձգութեամբ կռուեցաւ, մինչեւ որ ապահովութիւն ու հաշտութիւն խնդրեցին ու չնորհեց անոնց: Անոր ձիերը ելան քաղաքէն ու իջան ձուռնի (Գառնի). հասան Աշուշ ու Չաղ-ալ-Լուծում, Խոյթ լեռը ու ազատներու հովիտը եւ դրաւեցին Դուինի բոլոր գիւղերը: Յետոյ զինուոր ուղարկեց Սիրաճ Թայր (Շիրակ Տայոց) ու Բազրեւանդի վրայ. անոնց իշխանը եկաւ իր մօտ եւ հաշտուեցաւ հետը, պայմանով որ հարկ վճարէ, Իսլամ մոլորածներուն ճամբայ ցուցնէ, եւ զանոնք հիւրընկալէ ու թշնամիներուն դէմ օգնութիւն ընէ իրեն:

Ահա այս էր Դուինի հաշտութեան պատճէնը.

«Յանուն Աստուծոյ Ամենազթածի եւ Ամէնողորմածի, այս է Հապիպ իպըն Մասլամայի գիրը՝ Դուինի քրիստոնեայ, պարսիկ ու հրեայ բնակիչներուն համար, անոնց ներկայ եղողին ու բացակային: Ես ձեզի ապահովութիւն տուի՝ ձեր անձերուն, ինչքերուն, եկեղեցիներուն, տաճարներուն ու քաղաքին պարիսպին: Դուք ապահով էք. մենք պարտական ենք մեր խոստումը կատարելու որքան որ դուք վճարէք գլխահարկն ու երկրի տուրքը: Թող Աստուած վկայ ըլլայ ու ինքը բաւական է իբր վկայ»։ ու կնքեց զայն Հապիպ իպըն Մասլամա:

Յետոյ Հապիպ եկաւ Նախիջևան եւ զայն դրաւեց Դուինի հաշտութեան հիման վրայ: Անոր ներկայացաւ Վասպուրականի իշխանը, հաշտուեցաւ հետը, անոր բոլոր

երկիրներուն ու Հասալա ու Ալարիստա երկու երկիրներուն համար, պայմանով որ վճարէ հողատուրքը ամէն տարի: Վերջը եկաւ Սիսական. բնակիչները անոր դէմ կռուեցան ու յաղթեց անոնց: Գրաւեց Վայոց Ձորը ու հաշտութիւն կնքեց Սիսականի բերդականներուն հետ, պայմանով որ իրեն հողատուրք վճարեն:

Ապա քաղեց ձուրզանի (Վրաստան) վրայ: Ինծի պատմեցին Դուինի ծերունիներէն ոմանք, ինչպէս Պարմաք իպըն Ապտալլա, թէ Հապիպ իպըն Մասլամա քաղեց իրեններով ձուրզանի վրայ: Երբ Չաղ ուլ-Լուծում հասան, արձակեցին իրենց զրաւտները արածելու ու հաւաքեցին անոնց սանձերը: Այն ատեն անոնց դէմ ելան բարբարոսներ ու ստիպուեցան սանձերը դնելու: Կռուեցան անոնց դէմ. բարբարոսները զիրենք քշեցին, առին անոնց սանձերը եւ զրաւտները՝ որքան որ կըրցան: Յետոյ յարձակեցան (Արարները), սպաննեցին զանոնք, ու ետ առին ինչ որ անոնք առած էին. ու կոչեց այդ տեղը Չաղ ուլ-Լուծում (սանձակալ):

Կը պատմուի թէ Հապիպին եկաւ ձուրզանի իշխանին ու բնակիչներուն պատգամաւորը, մինչ Հապիպ անոնց երկիրը կ'ուղղուէր: Այն ատեն Հապիպ տրւաւ անոնց հաշտութեան ու ապահովութեան գիրը ու գրեց այսպէս. «Ձեր Նուբա (Նիկողայոս) պատգամաւորը եկաւ ինծի ու բոլոր հաւատացեալներուն որ հետս են, եւ յիշեց թէ դուք սիրեցիք մեր հաշտութիւնը, ու գնահատեցի ձեր ընծան, ու հաշտեցի զայն ձեր գլխահարկէն, զրեցի ձեզի ապահովութիւն, ու պայման դրի որ եթէ ընդունիք զայն ու կատարէք՝ աղէկ. ապա թէ ոչ՝ ձեզի դէմ պատերազմ կը յայտարարեմ յանուն Աստուծոյ ու իր առաքեալին. եւ խաղաղութիւն անոր որ հետեւի ճշմարտութեան:

Յետոյ Թիֆլիս եկաւ, հաշտութեան գիր գրեց անոր բնակիչներուն այսպէս. «Յա-

նուն Աստուծոյ ամենազթածի եւ ամէն-
ողորմածի. ահա այս է զիրը Հապիպ ի-
սլըն Մասլամայէ Թիֆլիսի ժողովուրդին,
որ կը պատկանին Մանճալիս գաւառին եւ
ձուրդան ալ-Գրորմըղի նահանգին. ապա-
հովութիւն իրենց անձերուն, եկեղեցիներ-
ուն, ճղնաւորներուն, աղօթատեղիներ-
ուն ու կրօնքին, ընդունելով չնչին գըլ-
խահարկ, որ է ամէն տան վրայ մէկ տի-
նար: Ներելի է՛ ձեզի որ միացնէք տունե-
րը՝ գլխահարկը թեթեւեղելու համար, եւ
ոչ մեզի ներելի է՛ որ զանոնք բաժնենք
շատցնելու համար: Պարտական էք մեզ
առաջնորդել ու օգնել մեզի Աստուծոյ
Մարգարէին թշնամիներուն դէմ՝ որքան
որ կրնաք: Գիշեր ատեն հիւրընկալել կա-
րօտ մահմետականը, ու տալ անոր այն
կերակուրներէն որ քրիստոնեան ու հրեան
մեզի ներելի կը նկատեն: Եւ եթէ իսլամ
մը ստիպուի ձեր քով իջնել, պարտական
էք զինքն առաջնորդել մօտաւոր Իսլամ-
ներուն, բացի այն պարագայէն՝ որ ձեզի
անկարելի ըլլայ: Իսկ եթէ դառնաք մեր
կրօնքին ու աղօթք կատարէք, դուք մեր
եղբայրները կ'ըլլաք, ապա թէ ոչ՝ պար-
տական էք գլխահարկ վճարել: Եւ եթէ
գործով մը Իսլամները ձեզմէ՝ հեռանան
ու յաղթահարէ ձեզ ձեր թշնամին, պա-
տասխանատու չենք այդ բանին ու դա-
շինքը խզած չենք ըլլար: Ահա ձեր իրա-
ւունքներն ու պարտականութիւնները.
թող Աստուած ու հրեշտակները վկայ ըլ-
լան, ու անոնք Աստուծոյ թաւական
են»:

Իսկ ալ-Ճառահ իսլըն Ապտալլա ալ-
Հաքամի Թիֆլիսցիներուն նամակ մը գը-
րեց, որուն օրինակն այս էր. « Յանուն
Աստուծոյ ամենազթածի եւ ամէնողորմա-
ծի. ահա այս է զիրը ալ-Ճառահ իսլըն
Ապտալլայէ՝ Թիֆլիսցիներուն, որ կը
պատկանին Մանճալիս գաւառին ու ձուր-
դան նահանգին, թէ ինծի եկան ապահո-
վութեան դրով մը Հապիպ իսլըն Մասլա-

մայէ, այն պայմանով՝ որ չնչին գլխա-
հարկ վճարեն, եւ թէ իրենց հետ հաշ-
տութիւն կնքած է իրենց երկիրներուն,
այգիներուն, ու աղօրիներուն համար որ
կը կոչուին Աւարի եւ Սապինա՝ Մանճա-
լիս գաւառէն. նաեւ Թահամ ու Տիտունայի
համար որ են Քախէթ գաւառէն ու ձուր-
դան նահանգէն, պայմանով որ այդ ջա-
ղացքներուն ու այգիներուն համար ամէն
տարի վճարեն հարկը դահեկան առանց
կրկնութեան: Իրենց զրկեցի ապահովու-
թեան ու հաշտութեան գիրը ու հրամայե-
ցի անոնց զրկել մէկը՝ որ երթայ կարգայ
իրենց իմ գիրս ու զանց չառնուի: Աստուծ-
ոյ գրուեցաւ»:

Պատմուեցաւ թէ Հապիպ զրաւեց Սու-
արէխ, Քասֆարնիս, Քիսալ, Սունան,
Սամախէ, Գարդման, Գասդակէ, Շու-
շէթ ու Պաղալիթ հաշտութեամբ առանց
արիւն թափելու, հաստատելով անոնց ա-
ղօթատեղիներն ու պարիսպները, պայմա-
նաւ որ հողատուրք վճարեն իրենց երկրին
համար ու գլխահարկ՝ իրենց անձերուն
համար: Հաշտութիւն կնքեց Քարաճէթի,
Թարիալէթի, Սախէթի, Սուխիթի, Ար-
տահանի ու Ալանաց գուռի բնակիչներուն
հետ եւ հաշտուեցաւ ձանարներուն ու Տա-
ուտանիներուն հետ՝ գլխահարկ վճարելու
պայմանով:

Կը պատմուի թէ Սալման իսլըն Բապիս
ալ-Պահլէլի՝ երբ Օթման անոր հրամայեց,
քալեց դէպի Առան ու գրաւեց Փայտակա-
րան քաղաքը հաշտութեամբ: Անոնց ա-
պահովեց իրենց արիւնը, ինչքերը, քա-
ղաքին պարիսպները, ու պայման դրաւ
որ վճարեն գլխահարկ ու հողատուրք:
Յետոյ Սալման գնաց դէպի Պարտաւ. բա-
նակեցաւ Թարթուր գետին վրայ որ Պար-
տաւի գետն է ու քաղաքէն երկու մղոնի
չափ հեռու: Բնակիչները գոցեցին դռնե-
րը. քանի մը օր աշխատեցաւ ու յարձա-
կումներ կատարեց անոր զիւղերուն վրայ՝
մինչ ցանքերն արդէն հնձուած էին: Հե-

տը հաշտուեցան Փայտակարանի հաշտու-
թեան հիման վրայ. բացին դռները, մը-
տաւ ու հոն կեցաւ: Զրկեց իր ձիաւորնե-
րը, զրաւեց Շիկաշէն, Մեծկուանք, Ուտ,
Մասրան, Հարճլանք ու Տարար, եւ զը-
րաւեց Առանի միւս գաւառները: Յետոյ
հրաւիրեց Բաղասականի Քիւրտերը որ
Իսլամ դառնան: Պատերազմեցան դէմը,
բայց յաղթուեցան. անոնցմէ՝ ոմանք գըլ-
խահարկ վճարեցին, ուրիշներ ալ որ քիչ
էին՝ ողորմութիւն տուին (էջ 199-203):

ԻԲ. — Շաւքոյի պատմութիւնը.

Ինծի պատմեցին Պարտաւցիներէն ու-
մանք՝ թէ Շամբոր հին քաղաք էր: Սալ-
ման իսլըն Բապիս ալ-Պահլէլի մարդ զըր-
կեց զայն գրաւելու ու գրաւեց: Շամբոր
շարունակեց չէն մնալ, մինչեւ որ զայն
կործանեցին Սեւորդիները: Այս ցեղի
մարդիկը իրարու քով եկան երբ Եղիտ ի-
սլըն Ուսայտ մեկնեցաւ Հայաստանէն:
Այն ատեն բնակիչներուն վիճակը ծանրա-
ցաւ ու աւելցան անոնց տառապանքները,
մինչեւ որ եկաւ Բուղա ալ-Մուդաուաթ-
ըլ Պիլլահի ազատագիր ստրուկը ու շի-
նեց զայն 240ին (854), մինչ կառավարիչ
էր Հայաստանի, Ատրպատականի ու Շիմ-
շաթի: Հոն բնակեցուց ժողովուրդ մը որ
եկաւ Խաղարներու քովէն, որ ապահո-
վութիւն եւ Իսլամական կրօնք խնդրեց:
Փոխադրեց հոն պարտաւցի վաճառական-
ներ ու քաղաքը կոչեց Մուդաւաթըլլիս
(էջ 203):

(Շարունակելի)

ԻԳ. — Սալմանի նուաճումները հիւսիսա-
յին Հայաստանի մէջ ու անոր սպանու-
թիւնը.

Կը պատմուի թէ Սալման քալեց դէպի
Արաքս ու Կուր գետերու խառնուրդը՝
Պարտիճի ետեւ: Անցաւ Կուրը, զրաւեց
Քապալայ ու հաշտուեցաւ Շաքէնի ու
Քամիբերանի իշխանին հետ՝ գլխահարկ
վճարելու պայմանով: Հաշտուեցաւ Խայ-
դանի բնակիչներուն, Շարուանի արքայի-
կին, ու Լեռներուն (ձիպալ) մնացած
արքայիկներուն հետ, ինչպէս նաեւ Մաս-
քաթի, Շապիրանի ու Պապ քաղաքին
հետ. բայց յետոյ բնակիչները փակեցին
դռները անոր ետեւէն: Անոր հանդիպեցաւ
Խաքան իր ձիաւորներով Պալանճար գե-
տին ետեւ, ու սպանուեցաւ չորս հազար
Իսլամներու հետ պատերազմի դաշտին
վրայ:

Սալման իսլըն Բապիս Քուֆայի առա-
ջին դատաւորը եղաւ: Հոն կեցաւ քառա-
սուն օր, առանց պատերազմ ընելու: Ին-
քը Օմար իսլըն ալ-Խաթթապի պատմու-
թիւնը գրած է:

Սալմանի ու Գուդայպայի մասին կ'ըսէ
իսլըն ձուպանա ալ-Պահլէլի.

Եթէ երկու գերեզման ունիմք, մէկը
Պալանմարի մէջ եւ միւսը Զինաստանի
մէջ: Զինաստանինը յաղթութիւններով
ծածկուած է. իսկ Պալանմարի գերեզմանը
կ'ոռոգէ քանձր անձրեւը: Սալմանի հետ
Պալանմարի մէջ կար Քարգա իսլըն Քապ-
ալ-Անարի, որ եկաւ Օթմանի լուր բե-
րաւ (էջ 203-204):

Թրգմ. արաբերէմէ
Հ. ԱՐԲԱՆՍՆԱՆ ԱՂԱՄԵԱՆ